

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԳ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ
ԽՈՍՔԸ «ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ
ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԱՇՏՈՑ ԴՊՐԱՏԱՆԸ
(22 հունիսի, 1999 թ.)**

Գերաշնորհ Արքազան Դայրեր, Դոգեշնորհ և Արժանապատիվ Դայրեր,
Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, համույն Վեհափառ Դայրապետի, բերում ենք Ձեզ մեր ջերմ ողջույնները և օրհնությունը Դայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա դարակազմիկ իրադարձության տոնակատարությունների շրջագծում հրավիրված «Աստվածաշնչյան Դայաստան» գիտաժողովի քաջման առիթով և մաղթում հոգեշահ Ձեր առաքելության մեջ ամենայն հաջողություններ, հետաքրքիր և արդյունավետ աշխատանք:

«Աստվածաշնչյան Դայաստան», առաջին մղումով մեր հայացքը մտովի ուղղվում է դեպի Դայաստանի մասին աստվածաշնչյան հիշատակությունները: Դնագույն քաղաքակրթության օրրան Դայկական լեռնաշխարհը, Մերձավոր և Միջին Արևելքի անցուղարձի կենտրոնում, բնականորեն ներկա է Աստվածաշնչյան դրվագներում, որոնց շարքում ամենահուղիչ խտացում-պատկերներից է Արարատի փառաշուք զագաթին Նոյյան տապանի հանգրվանումը՝ որպես Աստված - Մարդ հարաբերության մեջ Արարչական անբավ Սիրո նոր դրսևորում, փրկագործության Աստվածային նոր տնօրհնություն: Արարատի մաքուր փեշերից վերստին սկսվում է մարդկության կենսագրությունը, որի էջերին բազմադարյա շարադրանք է թողել նաև բիբլիական մեր ժողովուրդը:

«Աստվածաշնչյան Դայաստան» խորագրով գիտաժողովը կոչված է հարուստ նյութերով և գիտական զնահատականներով առավել ամբողջացնելու հայ ժողովրդի քրիստոնյա լինելիության 2000-ամյա անցյալն ու ներկան, նրա քրիստոնյա նկարագիրն ու դիմագիծը և առավելաբար կոչված է արժևորելու աստվածփնտրումի ճանապարհին հայ ժողովրդի անբեկանելի ընտրության՝ քրիստոնեական հավատքի լույս խորհուրդը:

Երանելի Աբգար թագավորի անթերահավատ հավատով մենք համընթաց դարձրինք մեր ուղին Երկնային Սիրո, Խաչի և Դարության կենաց ճանապարհին, որպեսզի Եղիշի շուրթերով տարբերակենք «մահ իմացեալը» «մահ ոչ իմացեալից», որպեսզի Ավարայրում Վարդանի և Վարդանանց սխրանքով հաստատենք՝ «թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզնից»: Քրիստոնեությունը մեր ժողովրդի համար արտաքին զգեստավորում չէ, այլ մաշկի գույն, նկարագիր, էություն, որ ծաղկող զրչով դրոշմվել է մագաղաթին և մատյանների շնչավորել, աներկբա հավատով հայրենյաց մեր սուրբ հողին մարմնավորվել որպես խաչքար, վանք ու եկեղեցի: Աստվածաշնչյան է Դայաստանը, Դայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու գոյությամբ, մեր

Ժողովրդի անցյալ ու ներկա հիշատակներով, ավելի ևս՝ նորօրյա մեր հավատի վերագարթոնքով, որպես նրաշխիք աստվածաշնչյան մեր հարատևության: 70-ամյա աստվածամերժ պտույտից հետո շտկել է ընթացքը ժամանակի անիվը: Նորոգ մեր հավատով այսօր հիմնվում և վերաբացվում են եկեղեցիներ, Աստվածաշնչյան ճշմարտությունը կրկին ճանաչելի է դառնում մեր ժողովրդին, օգնում իմաստավորելու, հույսով, սիրով և ուրախությամբ լցնելու կյանքը, զորացնում ստանձնելու ազատ ու բարձր Հայրենիք կերտելու պատասխանատվությունը, որպեսզի՝ առ Աստված մեր հավատքի և ինքնության ճանաչման մեջ մեզ համար շարունակաբար իմաստավորվի թերահավատություն չունենալը:

Թող այս գիտաժողովը ևս՝ հրավիրված Սուրբ Մեսրոպ Մաշտոց նորաբաց դպրատանը, ծոնված Հայաստանում քրիստոնեության պետականորեն ճանաչման 1700-ամյա մեծ տարեդարձին, որպես հարանորոգ ուխտի խորհուրդ ծառայի ինքնության մեր դիմագծին նորոգ հավատի՝ կնիք ավելացնելու, զորացնի մեզ հայրենյաց մեր ժառանգությանը հավատարիմ լինելու և առանց թերահավատության ընծյուղված մնալու հարանց մեր հավատին՝ քրիստոսի խաչով ուղենշված դեպ հաղթական Հարություն կենաց մեր ճանապարհին: